69 **ԻԳ.** [Աշխարհ]][1] Ասիոյ Սարմատաց[ւ]ոց[2] հասարակն է, որ բաժանի[3] արեւելեան ծայրիւ Ռիպեա[յ] լերամբ, եւ Տանայիս[4] գետով եւ Մէոտիս[5] ծովակով[6]՝ մտիւքն յԵ[ւ]քսինոս[7] Պոնտոս ծով, եւ անտի[8] նոյն ծովեզերբն՝ յելս կոյս, մինչեւ ցմուտ Կուռաքի գետո[յ], որ կոչի «Ագռաւ», եւ անտի առ Կաւկասին լերինն՝ առ Վրաւք եւ Աղուանի[ւ]ք[9], մինչեւ ցԿասբից ծովն, ի մուտս Սըւանաս գետո[յ]. Սըւանաս գետ չլըսի[10] ուրեք[11]: 70 Եւ ունի լերինս զՇանթա[յ]ինն եւ զՋիականն, որ արձակէ գետս հինգ[12] ի Միովտի[ս][13] ծով: 71 Եւ Կաւկաս արձակէ գետս երկուս[14] զՎալդանիս [...][15]՝ մինչեւ ցԿ[ո]ռաքս[16] լեառն, որ սկսանի հանդէպ Կաւկասա[յ] եւ ձգէ զերկայնութիւն իւր ի մուտս կոյս զհիւսիսեաւ (մինչեւ ի մէջ մտանէ ընդ Մէո՛տիս[17], ընդ Պոն[տ]ոս[18] ծով), որ արձակէ գետ մի Փսեւքոոս անուն, որ մեկն[է][19] ընդ Փոսփորոնն[20] եւ Ջիբուն[21] սահմանն, յորում՝ քաղաքիկն Նիկոփս: 72 Որ ըստ հիւսիսոյ են ազգ[ք][22] Թուրքաց եւ Բուլղարաց՝ ըստ անուանց գետոցդ կոչեցեալ՝ Կուփի Բուլղար, Դուչի Բուղկար[23], Ողխոնտոր Բղկար, Եկնչդար Բող[20ա]կար[24]. աւտար այժմ ի Պտղ[ոմէ]ականէն[25] են այս անուանք: 73 Եւ ի Ջիական

---

1 VS չիք Առաջին Հայք յելից ... ԻԳ. [Աշխարհ] (17 տող) (վեր.՝ ըստ Երեմեանի՝ համառօտից. տե՛ս **Ի. Աշխարհ ... ԻԳ. [Աշխարհ]**. գլխահամարի մասին հմմտ. նախ. Ե.61-ի ծնթ.)

2 V Սարմատացոց փխ Սարմատացւոց (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս Բ.30, Գ.54, Ե.324)

3 S բարժանի փխ բաժանի (V)

4 V Տայանիս փխ Տանայիս (վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. հմմտ. նաեւ նախ. Բ.30)

5 V Մեստիս, S Մեոտիս փխ Մէոտիս (վեր. ըստ այլոց, տե՛ս նախ. Գ.47, 49, Ե.71, հմմտ. բոլորագիր **է** → **ե** եւ **ո** → **ս**)

6 S ծովակաւ փխ ծովակով (V. վերջին տառերի համար գրիչն «անվերջութեան» նշանն է դրել (∞), որ հէնց **ով** է նշանակում, հմմտ. նախ. Ե.58՝ «ժողո**վ**են»)

7 V յԵքսինոս փխ յԵւքսինոս (վեր. Սուքրեանի. տե՛ս բոլորագիր **եւք** → **եք**)

8 V անդի փխ անտի (վեր. Սուքրեանի. հմմտ. յաջորդ տողում կամ այլուր՝ նախ. Ա.27, Ե.91, 176)

9 V Աղուանիք փխ Աղուանիւք (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Բ. 22, Ե.115)

10 VS չլըսի փխ չլըսի (վեր.)

11 Սուքրեանը փակագծով է տուել «Սըւանաս գետ չլըսի ուրեք»-ը եւ ծանօթագրել. «Այսպէս մնծեալ է ի կարգին, զոր անշուշտ գրեալ էր ուրուք ի լուսանցս». բայց հաւանական է, որ դա հէնց երկի հեղինակի նշումն է իր աղբիւրի (Պապպոսի՞) բնագրի առիթով. Սըւանաս գետանունը, թերեւս, վերականգնելի է Ս[ո]ւանաս (Պտղոմէոսի մօտ՝ Σοάνας)

12 V ե̅

13 VS Միովիտ փխ Միովտի[ս] (վեր.՝ ըստ միւսների, տե՛ս նախ. Բ.29 (Միովտին), Ե.78 (Միովիտս). հմմտ. **տիս ... իտ**. պահել ենք նաեւ առկայ Մէոտիս ձեւը (նախ. Գ.47, 49, Ե.69). նախ. Ե.71-ում Մէաւտիս է, համառօտում՝ Միովտիս, Միոտիս)

14 V բ̅, S երկու փխ երկուս (վեր., հմմտ. նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)

15 Փակագծերը մատնանշում են, որ հեղինակի խոստացած երկրորդ գետի անունը V-ում պակաս է, ինչպէս եւ, հաւանաբար, այլ բառեր. ըստ Պտղոմէոսի՝ Οὐαρδάνος-Կուբան-ից յետոյ մինչեւ Տանայիս դէպի Մէօտիդա էին հոսում նաեւ Ψάθιος, Ἀττικίτος, Փոքր եւ Մեծ Ῥομβίτος եւ Μαρουβίος գետերը)

16 VS ցԿոաքս փխ ցԿ[ո]ռաքս (վեր., տե՛ս բոլորագիր **ոռ** → **ռ**. հմմտ. նախորդի՝ նախ. Ե.69 (Կուռաքի գետ). Պտղոմէոսի մօտ՝ Κόραξ, Κόρακος ὄρους)

17 V Մէաւտիս, S Մէովտիս [եւ] փխ Մէո՛տիս (վեր., տե՛ս բանաւոր **Աւ/Օ** → **Ո**. հմմտ. նախ. Գ.47, 49, Ե.69)

18 V Պոնոս փխ Պոնտոս (վեր. Սուքրեանի՝ ըստ բազմաթիւ այլոց)

19 V մէկն փխ մեկնէ (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ա.4, Ե.90)

20 V-ի գրիչն առաջին **փո** տառերի վրայ կայծակնաձեւ նշան է դրել, որի իմաստը հասկանալի չէ

21 S ցբուն փխ Ջիբուն (V. գրիչն **ու** տառերի վրայ կայծակնաձեւ նշան է դրել, որի իմաստը պարզ չէ. Սուքրեանը «վերականգնել» է՝ ծանօթագրելով. «Յօր. զի բուն». ըստ Երեմեանի՝ վերականգնելի է Ջիքուն. Պտղոմէոսը չունի վերջին 2 անունները, բայց նա Պոնտոսի սարմատական ափին նշել է մի քանի λιμής-ներ, այսինքն՝ «նաւահանգիստներ», որոնք էլ կարող էին ընկալուել լատիներէնով՝ իբրեւ «սահման»)

22 VS ազգ փխ ազգ[ք] (վեր.՝ ըստ Բ.13, Գ.56 եւն)

23 S Բուլկար փխ Բուղկար (V. պահում ենք ցեղանուան բոլոր չորս ձեւերը)

24 S Բլկար եկն, Չդար Բողկար փխ Բղկար, Եկնչդար Բողկար (V)

25 V Պտղականէն փխ Պտղոմէականէն (վեր. Սուքրեանի՝ «Յօր. ի պտղականէն» ծանօթագրմամբ. հմմտ. նախ. Ա.30, Բ.33, Դ.33, Ե.206 եւն)